Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.134

Azerbaijan's Urban Planning and Settlement Policy in the Occupied Territories of Artsakh (2020–2024)[1]

Rema Arakelyan
https://orcid.org/0009-0002-5014-155X
YSU, Faculty of Oriental Studies, Master's Student
arakelyanrema3@gmail.com

Keywords: Artsakh, Azerbaijan, Shushi, urban development, settlement, Aliyev, conflict.

The article examines Azerbaijan's urban planning and settlement policy in the occupied territories of Artsakh after the 2020 44-Day War. Following the mass deportation of the Armenian population, Azerbaijan developed plans to resettle the occupied Armenian territories. The urban planning policy has several key objectives: to promote economic development and to integrate the occupied territories into Azerbaijan. By constructing roads, schools, hospitals, and residential complexes, Azerbaijan seeks to strengthen its control over Artsakh, transforming it into an economically active region.

Ադրբեջանի քաղաքաշինական և բնակեցման քաղաքականությունը Արցախի օկուպացված տարածքներում (2020-2024 թթ.)

Ռեմա Առաքելյան
ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրանտ

Հիմնաբառեր՝ Արցախ, Ադրբեջան, Շուշի, քաղաքաշինություն, բնակեցում, Ալիև, հակամարտություն:

[1] *Հետազոտությունն իրականացվել է Երևանի պետական համալսարանի ֆինանսական աջակցությամբ՝ ԵՊՀ ներքին դրամաշնորհ – 2024 ծածկագրով գիտական դրամաշնորհի շրջանակում:
*The research was supported by the YSU, in the frames of the research project N 2024 YSU internal grant
*Исследование выполнено при финансовой поддержке ЕГУ в рамках научного проекта N 2024 Внутренний грант ЕГУ

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 134-149.

Received: 15.09.2025
Revised: 13.10.2025
Accepted: 25.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Հոդվածում ուսումնասիրվում է Ադրբեջանի քաղաքաշինության ու բնակեցման քաղաքականությունը Արցախի օկուպացված տարածքներում 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո: Հայ բնակչության զանգվածային բռնագաղթից հետո Ադրբեջանը հայկական օկուպացված տարածքները բնակեցնելու ծրագրեր մշակեց: Քաղաքաշինության քաղաքականությունն ունի մի քանի հիմնական նպատակներ՝ նպաստել տնտեսական զարգացմանն ու օկուպացված տարածքների ինտեգրմանը Ադրբեջանին: Ճանապարհներ, դպրոցներ, հիվանդանոցներ ու բնակելի համալիրներ կառուցելով՝ Ադրբեջանը ձգտում է ամրապնդել իր տիրապետությունը Արցախի վրա՝ այն վերածելով տնտեսապես ակտիվ տարածքի:

Градостроительная и поселенческая политика Азербайджана на оккупированных территориях Арцаха (2020–2024)

Рема Аракелян
ЕГУ, факультет востоковедения, магистрант

Ключевые слова: Арцах, Азербайджан, Шуши, градостроительство, заселение, Алиев, конфликт.

В статье рассматривается градостроительная и поселенческая политика Азербайджана на оккупированных территориях Арцаха после 44-дневной войны 2020 года. После массовой депортации армянского населения Азербайджан разработал планы по заселению оккупированных армянских территорий. Градостроительная политика имеет несколько ключевых целей: способствовать экономическому развитию и интегрировать оккупированные территории в состав Азербайджана. Строя дороги, школы, больницы и жилые комплексы, Азербайджан стремится укрепить свой контроль над Арцахом, превращая его в экономически активный регион.

* * *

Ներածություն: Ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է Ադրբեջանը փորձում վերաձևել Արցախի օկուպացված տարածքները՝ այն ինտեգրելով իր վարչական համակարգին: Թեման արդիական է նաև միջազգային քաղաքականության տեսանկյունից, քանի որ Ադրբեջանի վերակառուցման գործընթացը ուղեկցվում է մշակութային ժառանգության փոփոխություններով, ինչը կարևոր հումանիտար ու իրավական հարցեր է առաջացնում: Թեման արդիական է, հիմնական աղբյուրները ադրբեջանական պաշտոնական հաղորդագրություններն ու ելույթներն են, նաև պետական ծրագրերը:

1994 թ.՝ արցախյան հակամարտության ռազմական փուլի ավարտից հետո, հայկական կողմը վերահսկողություն սահմանեց ոչ միայն նախկին ԼՂԻՄ-ի, այլև հարակից շրջանների վրա: Առանձնահատուկ կարևորություն էր ներկայացնում ռազմավարական նշանակություն ունեցող Լաչինի միջանցքը, որը կապող օղակ էր Հայաստանի Հանրապետության ու Արցախի միջև և ապահովում էր երկու հայկական պետությունների միջև անխոչընդոտ ցամաքային կապն ու հաղորդակցության մյուս կարևոր ուղիները: Հույժ կարևոր էր նաև Արցախի պատմական ու մշակութային կենտրոն Շուշին, որը ազատագրվել էր դեռևս 1992 թ. մայիսին: Ռազմավարական

կարևոր նշանակություն ունեին մի շարք շրջաններ ևս՝ Քարվաճառը (Քելբաջար), Ակնան (Աղդամ), Ջրականը (Ջաբրայիլ), Կովսականը (Զանգելան), Որոտանն ու (Կուբաթլի) ու Վարանդան (Ֆիզուլի)։

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ պատերազմ սկսեց արցախա-ադրբեջանական ռազմաճակատի գծի ողջ երկայնքով։ Թուրքիայի բացահայտ աջակցությամբ ու անմիջական մասնակցությամբ Ադրբեջանը կարողացավ ռազմի դաշտում հասնել նկատելի հաջողությունների։ Նոյեմբերի 9/10-ի ՀՀ-Ադրբեջան-ՌԴ եռակողմ հայտարարության հիմքի վրա Ադրբեջանը օկուպացրեց Արցախի Հանրապետության շուրջ 75 %-ը, ներառյալ նախկին ԼՂԻՄ Շուշիի ու Հադրութի շրջանները։ Ընդամենը 3 տարի անց Ադրբեջանը տարածաշրջանում աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում կարողացավ լիովին վերահսկողություն սահմանել ողջ Արցախի տարածքի վրա՝ սկզբնական փուլում շրջափակելով Լաչինի միջանցքը, ինչը հանգեցրեց տարածաշրջանում հումանիտար լուրջ խնդիրների, քանի որ զգալիորեն խափանվել էին մատակարարումները Արցախ։ 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը կրկին ռազմական գործողություններ սկսեց Արցախում՝ այն անվանելով «հակաահաբեկչական» և կենտրոնացավ Արցախի զինաթափման ու ամբողջական օկուպացիայի վրա։ Այս գործողությունների ընթացքում ադրբեջանական ուժերը արագորեն գրավեցին առանցքային դիրքերը՝ ստիպելով արցախյան ուժերին դադարեցնել մարտական գործողությունները հարձակման մեկնարկից ընդամենը 24 ժամ անց։ 2023 թ. սեպտեմբերի 20-ին Արցախի Հանրապետության իշխանությունները համաձայնեցին Ադրբեջանի պայմաններին, ներառյալ զինաթափումն ու պաշտպանության բանակի լուծարումը։ Ռազմական գործողությունների ավարտից հետո սկսվեց հայ բնակչության զանգվածային բռնագաղթը Արցախից Հայաստանի Հանրապետություն։

Արցախի վրա լիարժեք վերահսկողության հաստատումից հետո Ադրբեջանը ակտիվորեն սկսեց մշակել ու իրացնել լայնածավալ քաղաքաշինական ծրագրեր, որոնց մի մասը մեկնարկել էր դեռևս 2020 թ. նոյեմբերից։ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի անմիջական վերահսկողությամբ իրականացվող այս ծրագրերը ունեն մի քանի հիմնական նպատակներ։

Ինտեգրացիա։ Պատերազմի հետևանքով Արցախի օկուպացված շրջաններն ու քաղաքները և տեղի ենթակառուցվածքները լրջորեն վնասվել էին։ Ադրբեջանը փորձում է վերակառուցել այդ ենթակառուցվածքները (ճանապարհներ, հիվանդանոցներ, դպրոցներ ու բնակելի թաղամասեր)՝ առաջին հերթին նպատակ ունենալով այդ տարածքները ինտեգրել իր տնտեսությանը ու վարչական համակարգին։

Բնակեցում: Ադրբեջանը փորձելու է բնակեցնել հայաթափված Արցախը։ Ընդ որում՝ ժողովրդագրական ինժեներիայի այս քայլերը պաշտոնական Բաքուն բնութագրում է որպես «փախստականների վերադարձ», մինչդեռ հայտնի չէ, թե Արցախում անցնող 5 տարիների ընթացքում բնակեցված ադրբեջանցիների որ մասն է նախկինում բնակվել ԼՂԻՄ-ում կամ հարակից շրջաններում։ Արցախը «ադրբեջանականացնելու» նպատակով Ադրբեջանը կառուցում է նոր բնակելի համալիրներ, դրանք սպասարկող ենթակառուցվածքներ ու սոցիալական

հարմարություններ: Քաղաքաշինական ծրագրերը նպաստում են տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակի փոփոխությանը՝ պայմաններ ստեղծելով ադրբեջանական բնակչության բնակեցման կամ վերաբնակեցման և այդ տարածքներում նրա ներկայության ստեղծման համար:

Ինքնիշխանություն: Քաղաքների ու գյուղերի, ինչպես նաև ավերված եկեղեցիների տեղում մզկիթների կառուցումը[1] ծառայում է որպես այդ տարածքների նկատմամբ Ադրբեջանի ինքնիշխանության վերահաստատման խորհրդանշական քայլ: Սա ոչ միայն գործնական, այլ նաև քաղաքական նշանակություն ունի: Ակտիվ քաղաքաշինությունը դրական ազդեցություն է ունենում ոչ միայն Ադրբեջանի միջազգային իմիջի վրա, այլ նաև գրավում է միջազգային գործընկերների ուշադրությունը և հնարավորություններ ստեղծում ներդրումների համար: Ինքնիշխանությունն արտահայտվում է ոչ միայն քաղաքների ու գյուղերի վերականգնման, այլ նաև այնպիսի ենթակառուցվածքների զարգացման մեջ, ինչպիսիք են ճանապարհներն ու օդանավակայանները: Օդանավակայաններն իրենց հերթին կարևոր դեր են խաղում միջազգային տրանսպորտի հասանելիության ապահովման, զբոսաշրջիկների ներգրավման, օտարերկրյա ներդրումների ու առևտրի զարգացման համար հնարավորություններ բացելու գործում: Նման քայլերը ոչ միայն ամրապնդում են տարածաշրջանների ներքին կապերը, այլ նաև բարձրացնում են Ադրբեջանի միջազգային իմիջը:

Տնտեսական զարգացում: Ադրբեջանը ձգտում է օկուպացված տարածքները վերածել տնտեսապես ակտիվ շրջանների՝ զարգացնելով այնտեղ գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, արդյունաբերությունն ու այլ ոլորտներ: Քաղաքաշինական ծրագրերը ներառում են նաև աշխատատեղերի ստեղծում, ինչն էլ հնարավորություններ է ստեղծում բնակչության զբաղվածությունն ապահովելու համար[2]:

Ստորև ներկայացվող քաղաքաշինական ու վերաբնակեցման նախագծերը Ադրբեջանի երկարաժամկետ ռազմավարության մաս են կազմում՝ ամրապնդելու օկուպացված տարածքների նկատմամբ վերահսկողությունն ու ապահովելու դրանց զարգացումը:

Քաղաքաշինություն: Ճանապարհաշինությունը կազմում է քաղաքաշինության ողնաշարը՝ զարգացնելով քաղաքային միջավայրում շարժունակությունը, տնտեսական ներուժը, անվտանգությունը, կայունությունն ու լոգիստիկ կապերը: 2020 թ. 44-օրյա պատերազմի ավարտից գրեթե անմիջապես հետո Ադրբեջանը սկսեց Արցախի օկուպացված տարածքներում կառուցել «Հաղթանակի ճանապարհը» (ադրբ.՝ Zəfər yolu), որը կապում է Վարանդա, Հադրութ ու Շուշի քաղաքները, իսկ հիմնական նպատակը Շուշի տանող ենթակառուցվածքների ու մայրուղիների ստեղծումն է: Շինարարությունն իրականացնում են Ադրբեջանի ճանապարհների պետական գործակալության ենթակայության տակ գտնվող ադրբեջանական ընկերություններն ու թուրքական ընկերությունները, որոնք մեծ փորձ ունեն ճանապարհաշինարարական բարդ աշխատանքներ կատարելու գործում (''Azvir''-ը, ''İnşaat Turizm San''): Ճանապարհաշինարարական այս նախագիծը սպառնալիք է ներկայացնում Արցախի

[1] Բերձոր քաղաքում Սուրբ Համբարձման եկեղեցու տեղում ադրբեջանական իշխանությունները կառուցել են մզկիթ:

[2] Մասնավորապես, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ վերակառուցվող քաղաքները գրավում են ներդրողների ուշադրությունը:

օկուպացված տարածքներում գտնվող գյուղերի, պատմամշակութային հուշարձանների համար, քանի որ իրականացվել են տարածքի հարթեցման ու ընդլայնման աշխատանքներ, պայթեցման աշխատանքներ, քանդվել են տասնյակ կառույցներ ու շինություններ, մասնավորապես Մադաթաշեն գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Ավետարանոցի գերեզմանատունն ու կամուրջը, Մեծ Թաղեր գյուղը, Լիսագորն ու Սղնախ գյուղերը հիմնովին ավերվել են: Ազոխ գյուղի հուշահամալիրը, որը նվիրված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի, Արցախյան առաջին պատերազմի ու Հայոց ցեղասպանության զոհերին, ևս ավերված է: Մշակութային արժեքների ոչնչացումն արգելված է միջազգային մարդասիրական ու միջազգային քրեական իրավունքով, մասնավորապես 1949 թ. Ժնևի կոնվենցիաներով ու դրանց լրացուցիչ արձանագրություններով, 1954 թ. Հաագայի կոնվենցիայով մշակութային արժեքների պաշտպանության մասին, ինչպես նաև ՄԱԿ-ի համապատասխան պայմանագրերով ու Հռոմի ստատուտով, որոնք նման գործողությունները որակում են որպես հանցագործություն: Միջազգային հանրությունը պարտավոր է գործադրել իր լիազորությունները՝ կանխելու մշակութային ժառանգության անդառնալի կորուստն ու ապահովելու միջազգային իրավունքի գերակայությունը:

Օկուպացիայից հետո՝ 2024 թ., սկսեց դեպի Ասկերան ավտոմայրուղու շինարարությունը: Բարդա–Աղդամ ավտոճանապարհի 40-րդ կիլոմետրը Ասկերանի հետ (Աղդամ քաղաքի օղակաձև ճանապարհ) կապող 18 կմ երկարությամբ ճանապարհը Ադրբեջանը կառուցում է երկրորդ տեխնիկական մակարդակով՝ հաշվի առնելով Արցախի զարգացման[1] իրենց ծրագիրը [В Азербайджане начато строительство автомобильной дороги в Аскеран]:

Ադրբեջանի նախագահը, իր ելույթներում ընդգծելով քաղաքաշինության կարևորությունը, նշել է. «Մենք լայնածավալ աշխատանք ենք տանում Ղարաբաղում ու Արևելյան Զանգեզուրում[2], որն աշխարհում նմանը չունի: Իսկ ընդամենը երեք տարվա ընթացքում կատարված աշխատանքը՝ բնակելի շենքերը, ենթակառուցվածքային, ոռոգման ծրագրերը, երկաթուղիները, թունելները, օդանավակայանները, ցույց է տալիս մեր պետության, մեր կառավարության ուժն ու մեր պետության կամքը: Իմ նշած բոլոր նախագծերը կիրականացվեն» [Президент Азербайджана: Масштабы работ, которые мы выполняем в Карабахе и Зангезуре, не имеют аналога в мире]:

Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը ԱՀ քաղաքաշինության ու ճարտարապետության պետական կոմիտեի պատվերով, նաև 2024 թ. մայիսի 1-ի թիվ 235 որոշմամբ հաստատել է «Քելբաջար քաղաքի մինչև 2040 թվականը զարգացման գլխավոր հատակագիծը»: Գլխավոր հատակագծի համաձայն՝ տարածքներ են հատկացվել քաղաքի բնակչության բնակարանային ֆոնդի, սոցիալական ու մշակութային-կենցաղային սպասարկման օբյեկտների համար: Բացի դրանից՝ քաղաքի զարգացմանը համապատասխան բնակեցման սկզբունքի հիմքում ընկած է բնական լանդշաֆտի պահպանությունը, և հաշվի են առնվել տարածքային զոտիները ևս: Տրանսպորտային ու ինժեներահաղորդակցական ենթակառուցվածքը

[1] «Արցախի զարգացման ծրագիրը» Ադրբեջանի իշխանությունների նախաձեռնությունն է, որը միտված է օկուպացված տարածքների վերականգնմանն ու բնակեցմանը:

[2] «Արևելյան Զանգեզուր» արհեստածին տերմինը կիրառվում է Ադրբեջանի քաղաքական վերնախավի կողմից և ներառում է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի հարավային հատվածը:

նախատեսվում է ըստ քաղաքի զարգացման [Kəlbəcər şəhərinin 2040-cı ilədək inkişafına dair Baş planı təsdiqlənib]:

Ծրագրի համաձայն՝ Քարվաճառի 22 %-ը բաղկացած կլինի կանաչ տարածքներից, այսինքն՝ 60 հա տարածքի վրա կստեղծվեն կանաչ գոտիներ տարբեր տարիքային ու սոցիալական խմբերի համար: Այսպիսով՝ երկրի այլ քաղաքներում մեկ շնչին ընկնող կանաչ տարածքի չափը 7-10 մ² է, իսկ Քարվաճառում այդ ցուցանիշը կկազմի 33 մ²: Գլխավոր հատակագծի համաձայն՝ քաղաքի ճանապարհային ենթակառուցվածքները կառուցվելու են ժամանակակից չափանիշներով: Բնակչությունը կկարողանա օգտվել 27 կմ երկարությամբ ավտոճանապարհից ու 22 կմ երկարությամբ հեծանվային ճանապարհից: Ըստ նախագահ Ալիևի՝ Ղարաբաղը և, այսպես կոչված, «Արևելյան Զանգեզուրը» «կանաչ էներգիայի» գոտի դարձնելու առաջադրանքի՝ քաղաքի էներգամատակարարումը նախատեսվում է իրականացնել վերականգնվող էներգիայի ներուժի օգտագործմամբ: Բնակչությանը խմելու ջուրը մատակարարվելու է Աղչայի աղբյուրներից: Ծառայությունների, հատկապես զբոսաշրջության ու գյուղատնտեսության ոլորտները մեծ դեր կունենան Քարվաճառի տնտեսական զարգացման գործում [Kəlbəcərdə velosiped yolları salınacaq]: Քանի որ քաղաքը գտնվում է վերակառուցված «Իսթիսու» առողջարանին հարող տարածքում, այստեղ նախատեսվում է կառուցել օբյեկտներ, որոնք կխթանեն բժշկական տուրիզմի զարգացմանը: Այս ամենը բարենպաստ հիմք կստեղծի բնակչության կայուն զբաղվածության համար: Նշենք, որ քաղաքի վերջին գլխավոր հատակագծում (կազմված 1969 թ.) տարածքը կազմում էր 130 հա, իսկ բնակչությունը՝ 7500 մարդ, սակայն զարգացման հայեցակարգով մինչև 2040 թվականն այս թվերն ավելի են մեծանալու, ավելի քան երկու անգամ (տարածքը՝ մոտ 290 հա, բնակչությունը՝ 17000 մարդ): Ընդհանուր առմամբ, մինչև 2040 թվականը նախատեսվում է բնակչությանը տրամադրել 4250 բնակարան (մեկ անձի համար՝ 25 մ²): Նախատեսվում է նաև կառուցել 4 դպրոց (960 աշակերտական տեղով), 4 մանկապարտեզ (520 տեղով), 2 հիվանդանոց (160 մահճակալով), 1 վերականգնողական կենտրոն (150 մահճակալով), թանգարաններ, հյուրանոցներ, սննդի կետեր ու մարզահրապարակներ [Kəlbəcər şəhərinin Baş Planının detalları açıqlanıb]:Planinin

Ադրբեջանի պետական ավտոճանապարհների գործակալության (AAYDA) կողմից, համաձայն «Ադրբեջանի Հանրապետության օկուպացված տարածքներ մեծ վերադարձի I պետական ծրագրի», նախագծվում և կառուցվում է Ահմեդբեյլի–Ֆիզուլի–Շուշի 81,7 կմ երկարությամբ ավտոճանապարհը: Զեկուցվել է, որ I տեխնիկական կարգի ճանապարհի առաջին 48 կիլոմետրը կառուցվելու է 6, իսկ մնացած 33,7 կիլոմետրը՝ 4 գոտիով: Ճանապարհի հունի լայնությունը համապատասխանաբար 29,5 մ ու 21,5 մ է, բաժանարար գոտու լայնությունը՝ 2 մ: Ճանապարհի երկայնքով կառուցվում է 194 տարբեր տրամագծերի հեղեղատար, 38 գետնանցում, 11 կամուրջ, 7 թունել: Կամուրջների ընդհանուր երկարությունը 1557 մետր է, իսկ թունելների ընդհանուր երկարությունը՝ մոտ 6450 մետր մեկ ուղղությամբ: Ահմեդբեյլի–Ֆիզուլի–Շուշի մայրուղին սկսվում է M6 Հաջըգաբուլ–Հորադիզ–Աղբանդ–Սյունիք միջանցքային մայրուղուց և միացնում է «օկուպացիայից ազատագրված» Ֆիզուլի, Մարտունի, Խոջալու ու Շուշի շրջանները [Əhmədbəyli-Füzuli-Şuşa yolunun son görüntüləri]: Շուշի վերադարձած առաջին բնակիչներին բնակարանների բանալիների հանձնման արարողության ժամանակ ունեցած ելույթի ժամանակ Ալիևը նշել է. «Ղարաբաղի ու Արևելյան Զանգեզուրի շրջանները կլինեն ամենագեղեցիկ վայրերից

մեկը ոչ միայն Ադրբեջանում, Կովկասում, այլև աշխարհում՝ ամենաժամանակակից, ամենաահարմարավետը, ամենագեղեցիկը» [Prezident: "Qarabağ və Şərqi Zəngəzur bölgələri dünyanın ən gözəl yerlərindən biri olacaq"]:

Քանի որ Շուշին Արցախի մշակութային մայրաքաղաքն է, պատերազմից առաջ Ադրբեջանի համար առանձնահատուկ նշանակություն է ունեցել Շուշիի գրավումը, ինչը Ալիևը բազմիցս նշել է իր ելույթներում. «Պատերազմի տարիներին ես հարցազրույցներ եմ ունեցել արտասահմանյան լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Բայց ես, իհարկե, ոչինչ չէի կարող ասել մեր պատերազմական ծրագրերի մասին: Ուղղակի մի անգամ ինձ հարցրին Շուշիի մասին, ասացի, որ առանց Շուշիի մեր գործը կիսատ կմնա: Կարծում եմ՝ բոլորը հասկացան, որ մենք կանգ չենք առնելու, քանի դեռ Շուշին չի ազատագրվել» [Azərbaycan Prezidenti: "Müharibənin Şuşasız uğurla başa çatması mümkün deyildi"]: Ընդգծելով, որ Շուշիում ընթանում են շինարարական լայնածավալ աշխատանքներ՝ Ալիևն իր ելույթում ասել է. «Բոլոր տները կառուցված են ճարտարապետական գեղեցիկ ոճով՝ Շուշիի ավանդական ոճով: Ես վստահ եմ, որ երկար ընդմիջումից հետո շուշեցիներն այստեղ հարմարավետ կապրեն, կստեղծեն, կկառուցեն, կպաշտպանեն իրենց հայրենի քաղաքի պատմական դիմագիծը» [İlham Əliyev: "Bu gün Şuşanın yeni tarixi başlayır"]:

Վերակառուցման աշխատանքներին իշխանական վերնախավը ոչ միայն ակտիվ հետևում է, այլ նաև մասնակցում է, օրինակ՝ Զանգելանի ներքին ճանապարհային ու հաղորդակցական ցանցի հիմքը դրել է նախագահ Ալիևը [İlham Əliyev Zəngilan şəhərinin daxili yol-kommunikasiya şəbəkəsinin təməlini qoyub]: Ակտիվորեն կառուցվում է նաև Հորադիզ–Զանգելան ավտոճանապարհը, որը կարևոր դեր է ունենալու Ադրբեջանի կողմից «ազատագրված» տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Գրավյալ տարածքներում վերակառուցման աշխատանքներից կարևոր է նաև հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) կառուցումը, որը կարող է ունենալ մի քանի նպատակ՝ ***էներգետիկ անկախություն***՝ վերահսկվող շրջաններին էլեկտրաէներգիայի տրամադրում, արտաքին մատակարարումներից կախվածության նվազեցում, ***քաղաքական ու ռազմավարական վերահսկողություն***՝ ենթակառուցվածքների զարգացում՝ գրավյալ տարածքներում իշխանության ամրապնդման ու ազդեցության մեծացման համար, ***տնտեսական օգուտներ***՝ էներգառեսուրսների հասանելիություն՝ տեղական տնտեսությանը աջակցելու համար:

«ԱզերԷներջի» ԲԲԸ-ի կողմից Զանգելանի տարածքով անցնող հատվածում կարճ ժամանակում նախագծվել և կառուցվել է հէկերի շարք: «Զահանգիրբեյլի» հէկը, որն «ազատագրված» տարածքների ամենամեծ հիդրոէլեկտրակայանն է, շահագործման է հանձնվել 2023 թ. նախագահ Ալիևի մասնակցությամբ: «Շայըֆլն» ու «Զանգելան» հէկերը պատրաստվել են բացման, իսկ «Սարըքըշլախ» հէկի աշխատանքները ավարտվել են: Զեկուցվել է, որ Արաքս գետի ձախակողմյան վտակ Օխչուչայում կառուցված հէկերին ջուր մատակարարելու համար ծովի մակարդակից 600 մետր բարձրության վրա կառուցվել է հիմնական ջրառը: Ջրառի ստեղծումը շատ կարևոր իրադարձություն է՝ հեղեղումներն ու ջրի կորուստը կանխելու համար: Զեկուցվել է, որ «ԱզերԷներջի» ԲԲԸ-ի կողմից Զանգելանում մշտական աշխատանքով ապահովվել է 30 մարդ

(հիմնականում՝ տեղի բնակիչներ)։ Ընդհանուր առմամբ, նախագահ Ալիևի զբաղվածության ու բնակեցման քաղաքականության համաձայն՝ «ԱզերԷներջի» կողմից «ազատագրված» տարածքներում ստեղծվել է շուրջ 400 մշտական աշխատատեղ։ Առաջիկայում 10-ից ավելի հիդրոէլեկտրակայանների շահագործման ու շինարարության մեկնարկով աշխատողների թիվը կգերազանցի 550-ը [İlham Əliyev "Zəngilan" və "Şayıflı" Su Elektrik stansiyalarının açılışlarını edib]։ Վերակառուցման ծրագրի շրջանակում կառուցվում են մի քանի գյուղեր՝ Մաշանլը, Քարխուլու, Սարըջալը։ Նախատեսվում են Մաշանլը գյուղի 2360 բնակչի համար 590 առանձնատան նախագծում ու կառուցում։ Ընդգծվել է, որ կստեղծվեն բոլոր պայմանները՝ գյուղում բնակչության զբաղվածությունն ապահովելու համար։ Այս գյուղում նախատեսվում է մարզական ու առողջապահական կենտրոններ, հանդիսությունների տուն, շուկա, առևտրի, սննդի, փոքր բիզնեսի օբյեկտներ։ Բացի դրանից՝ գյուղում, գլխավոր հատակագծի համաձայն, նախատեսվում է կառուցել միջնակարգ դպրոց ու երկու մանկապարտեզ [İlham Əliyev Cəbrayıl rayonunun Maşanlı kəndinin təməlini qoyub]։

Ջաբրայիլ շրջանի վարչական տարածքում ընդգրկված Քարխուլու գյուղը հյուսիսից շրջապատված է Ահմեդբեյլի–Հորադիզ–Մինջիվան–Աղբանդ ավտոճանապարհով, իսկ հարավից ու հարավ-արևելքից՝ Հորադիզ–Աղբանդ երկաթուղային գծով։ Մինչև 2040 թվականը գյուղի նախագծային տարածքը կազմում է 313 հա, և այս ընթացքում նախատեսվում է կառուցել 940 տուն ու բազմահարկ բնակելի շենք գյուղի 4428 բնակչի համար [Cəbrayılın Karxulu kəndinin təməli qoyulub]։ Սարըջալը գյուղի համար մինչև 2040 թվականը նախատեսվում է կառուցել 1185 անհատական տուն ու բազմահարկ շենք 4740 բնակչության համար [Prezident İlham Əliyev Cəbrayıl rayonunun Sarıcallı kəndinin təməlini qoyub]։

Օկուպացված տարածքներում վերակառուցման ծրագրի հաջորդ կետը ջրամատակարարման համակարգի կառուցումն է, որը կարևոր է մի քանի պատճառներով։

Տնտեսական կայունություն: Ջուրն անհրաժեշտ է ոչ միայն բնակչության անձնական կարիքների, այլև գյուղատնտեսության, արդյունաբերության ու տնտեսության այլ ոլորտների գործունեության համար։ Առանց բավարար ջրամատակարարման, գյուղատնտեսական արտադրության ճգնաժամ կարող է առաջանալ, ինչը կազդի տարածաշրջանի պարենային անվտանգության վրա։

Միջազգային ճնշում: Միջազգային կազմակերպություններն ու երկրները կարող են մեղադրել օկուպացիոն վարչակազմին միջազգային նորմերը խախտելու համար, եթե բնակչության հիմնական կարիքները, ներառյալ ջրի հասանելիությունը, չեն բավարարվում։ Ջրային ենթակառուցվածքների կառուցումը կարող է օգնել բարելավել կառավարության իմիջը միջազգային հանրության առջև։ Այսպիսով՝ ջրամատակարարման համակարգի կառուցումը ոչ միայն կենսապահովման խնդիր է, այլ նաև օկուպացված տարածքներում կառավարման ու վերահսկողության կարևոր ասպեկտ։

Վերակառուցման ծրագրի համաձայն՝ նաև վերականգնվել է Փոքր Քիրս-Շուշի մայրուղային ջրատարի վնասված հատվածները, իսկ Շուշիի ջրամատակարարումը վերականգնվել է դեռևս 2020 թ. նոյեմբերի 25-ին։ Քաղաքի հեռանկարային զարգացման, ինչպես նաև տարվա որոշակի ժամանակահատվածներում Փոքր Քիրսի ու Ջառըսլը աղբյուրների արտադրողականության կտրուկ նվազման պատճառով սկսվել է այլընտրանքային ջրի աղբյուր ստեղծելու նախագիծը։ Այդ նպատակով Քարինտակ գյուղի մոտ՝ Ջառըսլը գետի հունում,

կառուցվել է 25 հազար խորանարդ մետր տարողությամբ ջրամբար ու նոր խողովակաշար՝ 159 միլիմետր տրամագծով ու 2,9 կիլոմետր երկարությամբ [Prezident İlham Əliyev Şuşa sutəmizləyici qurğular kompleksinin açılışında iştirak edib]:

Հուլիսի 6-ին Շուշիում կայացած Թյուրքական պետությունների կազմակերպության պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովում իր ելույթում նախագահ Իլհամ Ալիևը հայտնել է, որ Լաչինի (Բերձորի) միջազգային օդանավակայանը շահագործման կհանձնվի հաջորդ տարի և կլինի Ադրբեջանի 9-րդ միջազգային օդանավակայանը [Prezident: Laçın Beynəlxalq Hava Limanı gələn il istifadəyə veriləcək]: Օկուպացված տարածքներում օդանավակայանի կառուցումը կարևոր է ռազմավարական, տնտեսական, լոգիստիկ և մի շարք այլ պատճառներով:

Օկուպացված Արցախում համալսարանի ստեղծումը կարևոր քայլ է Ադրբեջանի կրթական համակարգի զարգացման ու տարածաշրջանում կրթական ենթակառուցվածքների վերականգնման գործում: Սկզբնական փուլում համալսարանը կներառի 6 ֆակուլտետ՝ մանկավարժության, արվեստի, հումանիտար ու հասարակական գիտությունների, տնտեսագիտության, ճարտարագիտության ու զբոսաշրջության [Prezident İlham Əliyev Xankəndidə Qarabağ Universitetində görülən işlərlə tanış olub]: 2024-2025 ուսումնական տարում նախատեսվում է վերապատրաստել 1120 ուսանողի 27 մասնագիտությունների գծով: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը համալսարանի ստեղծումը որակել է որպես «պատմական իրադարձություն»՝ ընդգծելով դրա նշանակությունը երկրի ապագայի համար [Azərbaycan Prezidenti: Qarabağ Universitetinin yaradılması tarixi hadisədir]: Համալսարանի ստեղծման հիմնական նպատակներից է բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստումը՝ աշխատաշուկայի ներկա ու ապագա կարիքները բավարարելու համար: Սակայն Արցախում համալսարանի բացումը ոչ միայն կրթական միտում ունի, այլ նաև այդ քայլով Ադրբեջանը ամրապնդում է իր վերահսկողությունը Արցախի նկատմամբ: Ադրբեջանը՝ որպես մուսուլմանական երկիր, դիտարկում է Արցախում մզկիթների կառուցումը կամ վերականգնումը որպես այդ տարածքում իր մշակութային ու կրոնական ներկայությունը վերականգնելու միջոց: Խորհրդային տարիներին ու հետագա հակամարտությունների ժամանակ տարածաշրջանի որոշ մզկիթներ վնասվել կամ լքվել են, և դրանց վերակառուցումը կարող է դիտվել որպես մշակութային ժառանգության վերականգնում: Կրոնական հաստատությունների կառուցումը կբավարարի վերադարձող կամ վերաբնակեցվող համայնքների հոգևոր կարիքները: Մզկիթներ կառուցելով ու վերականգնելով՝ Ադրբեջանը նաև ձգտում է միջազգային հանրության առջև ներկայանալ որպես իսլամական մշակույթի ու ժառանգության պաշտպան՝ ստանալով աջակցություն մուսուլմանական երկրների ու միջազգային կազմակերպությունների կողմից: Արցախն օկուպացնելուց հետո Ադրբեջանը մեծածավալ աշխատանքներ է տանում ոչ միայն շինարարական, այլ նաև մշակույթի ոլորտում, իսկ մզկիթները կառուցվում են մասնավորապես «Հեյդար Ալիև» հիմնադրամի կողմից:

Նախագահին զեկուցվել է, որ «օկուպացիայից ազատված տարածքների» պատմամշակութային ու կրոնական հուշարձանների վերականգնման ծրագրերի շրջանակում Աղդամի Ջումա մզկիթի աշխատանքներն ավարտվել են, և մզկիթը վերականգնվել է նախկին

տեսքին: Պահպանման ու վերականգնման աշխատանքներն իրականացվել են «Հեյդար Ալիևի» հիմնադրամի կողմից՝ մզկիթի նախնական ճարտարապետական ոճին համապատասխան [Ağdam Cümə məscidinin bərpadan sonra açılışı olub]: Հայտնի է, որ բացի դրանից՝ «Հեյդար Ալիևի» հիմնադրամը վերականգնել է Գոհար Աղա, Սաաթլը մզկիթները, ինչպես նաև Շուշիի Մեհմանդարովի մզկիթը և շահագործման է հանձնել 2023 թ. մայիսին [Prezident və xanımı Şuşada Mamayı məscidinin açılışında iştirak ediblər]: Զանգելանի (Որոտան) հին քաղաքային մզկիթը ևս հիմնովին վերանորոգվել է «Հեյդար Ալիևի» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ, իսկ Զանգելանի նոր մզկիթի հիմքը դրվել է նախագահ Ալիևի կողմից 2021 թ. ապրիլի 26-ին՝ քաղաքը «օկուպացիայից» ազատագրելուց հետո [Zəngilan məscidinin əsaslı təmirdən sonrakı görüntüləri]: Ալիևը մասնակցել է Շուշիում վերականգնումից հետո Գոհար Աղա մզկիթի բացմանը[1]: Նշենք, որ մզկիթի տարածքում գտնվող շենքում ստեղծվել է թանգարան [Şuşada Aşağı Gövhər Ağa məscidinin bərpadan sonra açılışı olub]:

«Շուշին՝ 2024 թվականի իսլամական աշխարհի մշակութային մայրաքաղաք» արարողության բացման ժամանակ Ալիևն ասել է. «Մենք հետևողականորեն աշխատում ենք իսլամական համերաշխության ուղղությամբ: Ադրբեջանը մեծ ջանքեր է գործադրում իսլամական աշխարհը միավորելու ու իսլամական համերաշխությունն ամրապնդելու համար: Իհարկե, այն փաստը, որ Շուշի քաղաքը իսլամական աշխարհի մշակութային մայրաքաղաքն է, մեզ լրացուցիչ հնարավորություն կտա մեր մշակույթը փոխանցելու ինչպես մուսուլմանական երկրների համայնքին, այնպես էլ համաշխարհային հանրությանը» [Şuşada "Xarıbülbül" Festivalı və "Şuşa - İslam dünyasının mədəniyyət paytaxtı 2024" ilinin açılışı olub, Prezident İlham Əliyev və Mehriban Əliyeva tədbirdə iştirak ediblər]:

«Մեծ վերադարձ» ծրագրի շրջանակում Լաչին քաղաք ու Սուս գյուղ տեղափոխված բնակիչները մասնակցում են զբաղվածության ակտիվ ծրագրերին [Laçına köçürülən 950-dən çox şəxsin məşğulluğu təmin olunub]: «Մեծ վերադարձ» ծրագիրը նախաձեռնություն է, որի առաջին փուլը կավարտվի մինչև 2026 թ. վերջ, և այս փուլում 140 հազար ադրբեջանցի կվերադառնա Արցախ: Ընդհանուր առմամբ, «Մեծ վերադարձ» ծրագրի առաջին փուլը նախատեսում է 100 բնակավայրի վերակառուցում ու վերաբնակեցում, այդ թվում՝ բոլոր օկուպացված քաղաքներում: 2022-2026 թթ. «Մեծ վերադարձի առաջին պետական ծրագրի» իրականացման համար ընդհանուր առմամբ պահանջվում է մոտավորապես 32 միլիարդ մանաթ [**Böyük Qayıdış**]:

Բնակեցում: Հակամարտության գոտուց հայ բնակչության զանգվածային բռնագաղթից հետո Ադրբեջանը օկուպացված տարածքները բնակեցնելու ծրագրեր մշակեց: Բնակեցման հիմնական նպատակն է Արցախը ինտեգրել Ադրբեջանին, վերականգնել ավերված ենթակառուցվածքները՝ պայմաններ ստեղծելով ադրբեջանցիների բնակեցման համար: Այս գործընթացը ներառում է նաև ժողովրդագրական փոփոխություններ, քանի որ Ադրբեջանը նախատեսում է տարածքը վերաբնակեցնել իր քաղաքացիներով, հնարավոր է նաև այլ շրջաններից «տեղահանվածներով»: Բացի դրանից՝ Ադրբեջանը ձգտում է վերահսկողություն հաստատել տարածաշրջանում կյանքի սոցիալական, տնտեսական ու վարչական ասպեկտների վրա՝ կանխելու ցանկացած նոր շարժում ու ամրապնդելու իր տարածքային

[1] Գոհար Աղա մզկիթի վերականգնման ծրագիրը դեռևս կյանքի էր կոչվել 2015 թ. և իրականացվել էր «Հայաստանի զարգացման նախաձեռնությունների հիմնադրամի» շնորհիվ (IDeA) Արցախի զարգացման ծրագրի շրջանակում:

Azerbaijan's Urban Planning and Settlement Policy in the Occupied Territories of Artsakh (2020–2024)[1]

Ադրբեջանի քաղաքաշինական և բնակեցման քաղաքականությունը Արցախի օկուպացված տարածքներում (2020-2024 թթ.)

ամբողջականությունը: Բնակեցումը կարևոր է նաև Արցախը երկարաժամկետ հիմունքներով կառավարելու Ադրբեջանի «իրավունքի» ապահովման համար և հույժ կարևոր է նաև տնտեսական տեսանկյունից. ներդրումները, զարգացած գյուղատնտեսությունը, արդյունաբերությունն ու զբոսաշրջությունը հիմք կհանդիսանան, որ Արցախը ինտեգրվի Ադրբեջանի տնտեսության մեջ, իսկ վերոնշյալ ոլորտները ակտիվորեն կգործեն, եթե օկուպացված տարածքները բնակեցված լինեն: Ստորև ներկայացնում ենք Ադրբեջանի վարած բնակեցման քաղաքականության մի քանի օրինակ:

Ֆիզուլիում 39 ընտանիքի հանձնել են իրենց բնակարանների բանալիները: AZERTAC-ի թղթակիցը հայտնում է, որ Ֆիզուլիի 150 բնակիչ վերադարձել է «հայրենիք»: Նոր տեղափոխված ընտանիքներին մանրամասն տեղեկություններ են տվել ականների ու չպայթած զինամթերքի վտանգի մասին: Նրանց խորհուրդ է տրվել հեռու մնալու անհայտ առարկաներից ու մարմիններից և նման իրավիճակների հանդիպելիս զեկուցելու համապատասխան մարմիններին [Füzulidə daha 39 ailəyə mənzillərinin açarları təqdim olunub]: 50 ընտանիք վերաբնակեցվել են Շուշի քաղաքում: Վերջիններս տեղակայվել են 23 շենքից բաղկացած առաջին նոր բնակելի համալիրում [Начинается заселение города Шуша]: Շուշիում կառուցվելիք երրորդ բնակելի համալիրի կառուցման ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել 17 բնակելի շենք: Համալիրն ընդհանուր առմամբ բաղկացած կլինի 487 բնակարանից, իսկ երրորդ բնակելի համալիրի հիմքը դրել է նախագահ Ալիևը [İlham Əliyev və Mehriban Əliyeva Şuşada üçüncü yaşayış kompleksinin təməlqoyma mərasimində]: Մայիս ամսվա տվյալներով Շուշիի 136 բնակիչ, այդ թվում՝ 38 ընտանիք, վերադարձել է «հայրենիք»: Բանալիների հանձնման արարողությանը մասնակցել են Ադրբեջանի նախագահի հատուկ պատվիրակության, փախստականների ու վերաբնակների հարցերով պետական կոմիտեի պաշտոնյաներ և այլ անձինք [Şuşa şəhərində daha 38 ailəyə mənzillərinin açarları təqdim olunub]:

Պետական ծրագրի համաձայն՝ 2022-2026 թթ. Զանգելանի, Ջաբրայիլի ու Կուբաթլիի շրջաններում նախատեսվում է կառուցել 24 գյուղ, 5 բնակավայր ու 3 քաղաք: Ներկայումս Ջաբրայիլում արդեն 712 բնակարանից բաղկացած մեծ համալիր է կառուցվում, և նախատեսվում է Ջաբրայիլ տեղափոխել 712 ընտանիք: AZERTAC-ը հայտնում է, որ այս մասին Լաչինում կայացած «COP29 և Կանաչ տեսլականը Ադրբեջանի համար» միջազգային համաժողովում ասել է Զանգելանի, Ջաբրայիլի ու Կուբաթլիի շրջաններում Ադրբեջանի նախագահի հատուկ ներկայացուցիչ Վահիդ Հաջիևը: Նա ընդգծել է, որ Զանգելանում մեծ աշխատանք է կատարվում. «Զանգելանում կառուցվում է 13 շենքերից բաղկացած համալիր, և 2024-2026 թթ. նախատեսվում է բնակիչների տեղափոխում: Ներկայումս շրջանի Ջահանգիրբեյլի գյուղում շինարարական աշխատանքներ են իրականացվում: Հաջիևը նշել է՝ Ջաբրայիլի շրջանի Հորովլու բնակավայրում, Կուբաթլի շրջանի Մահրուզլու ու Զիլանլը գյուղերում արդեն սկսվել է շինարարությունը, և նախատեսվում է միգրացիա դեպի այդ գյուղեր: «2022-2026 թթ. պետական ծրագրի համաձայն՝ 40 հազար մարդ կտեղափոխվի Ջաբրայիլ, Կուբաթլու ու Զանգելան: Ընդհանուր առմամբ, ազատագրված տարածքները հայտարարված են կանաչ գոտիներ, ուստի արևային մարտկոցներ

են օգտագործվում բոլոր վարչական շենքերի վրա։ Բացի դրանից՝ Զանգելանի շրջանում արդեն գործում է 4 փոքր հիդրոէլեկտրակայան»,– ասել է նախագահի ներկայացուցիչը [Xüsusi nümayəndə: 2026-cı ilədək Cəbrayıl, Qubadlı, Zəngilana 40 min nəfər köçürüləcək]:

Զանգելանում շարունակվում են շինարարական ու վերակառուցման աշխատանքները՝ քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն։ Գլխավոր հատակագիծը պատրաստել է շվեյցարական «SA partners» ընկերությունը Պետական քաղաքաշինության և ճարտարապետության կոմիտեի պատվերով։ Զանգելանի այն տարածքը, որտեղ նախատեսվում են շինարարական աշխատանքներ, կազմում է մոտավորապես 333 հա. «Ներկայումս սկսվել է ութհարկանի «Թաունհաուս» տիպի բնակելի բնակարանների շինարարությունը։ Մինչև այս տարվա վերջ ակնկալվում է, որ բնակարանները պատրաստ կլինեն 104 ընտանիքի բնակեցման համար։ Բացի դրանից՝ հաջորդ բնակելի թաղամասում շարունակվում են 8 շենքից բաղկացած 176 բնակարանի, 12 շենքից բաղկացած 138 բնակարանի ու 87 «Թաունհաուս» տիպի բնակելի տների նախագծման աշխատանքները։ 317 ընտանիքի կայուն բնակեցման համար նախատեսված բնակելի համալիրի կառուցումը նախատեսվում է տարեվերջին [Zəngilan şəhərində ilin sonuna qədər 104 ailənin məskunlaşması ücün mənzillərin hazır olması nəzərdə tutulur]:

Ադրբեջանը բնակեցման քաղաքականություն է վարում օկուպացված Արցախի հիմնականում արևմտյան ու հարավային շրջաններում։ Մասնավորապես՝

- Ֆիզուլիում (Վարանդա), քանի որ Ֆիզուլին կարևոր դեր է խաղում օկուպացված տարածքները Ադրբեջանի հետ կապելու գործում։
- Կուբաթլիում (Սանասար), քանի որ Կուբաթլին մոտ է առանցքային տրանսպորտային ուղիներին, այդ թվում՝ Նախիջևանը, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքով» Ադրբեջանի մնացած տարածքներին կապող ճանապարհին և շրջանն ունի բնական ռեսուրսների մեծ պաշար։
- Զանգելանում (Կովսական), քանի որ Զանգելանը կայուն զարգացման կենտրոն է դառնում էներգիայի վերականգնվող աղբյուրների, այդ թվում՝ հիդրոէլեկտրակայանների օգտագործման շնորհիվ։ Այս տարածքը ռազմավարական նշանակություն ունի, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքի համար, որն ապահովում է ուղիղ մուտք դեպի Թուրքիա ու միջազգային առևտրային ուղիներ։
- Բնակեցվել են նաև Մատաղիսն ու Թալիշը, ավելին՝ պատմամշակութային կոթողները ավերվել են, իսկ փոխարենը Ադրբեջանը կառուցել է «Դրոշի պուրակը»։
- Եվ, իհարկե, Ադրբեջանի համար հույժ կարևոր է Շուշիի բնակեցումը, որը հայկական Արցախի մշակութային մայրաքաղաքն է։

Այսպիսով՝ 2020 թ. 44-օրյա պատերազմի ու դրան հաջորդած ռազմական գործողությունների ավարտից ի վեր օկուպացված Արցախում Ադրբեջանը վարում է քաղաքաշինության ու բնակեցման լայնածավալ քաղաքականություն։ Այս քաղաքականությունը կրում է բազմաթիվ հարթություններ, որոնք արմատավորված են Ադրբեջանի քաղաքական, ռազմական ու տնտեսական ավելի լայն նպատակներով։ Ադրբեջանի քաղաքաշինության նպատակն է ինտեգրել Արցախի օկուպացված շրջաններն իր վարչական ու տնտեսական համակարգերին։ Կառուցվում են նոր ճանապարհներ, դպրոցներ, հիվանդանոցներ ու բնակելի համալիրներ՝ այդ տարածքները որպես Ադրբեջանի տնտեսության կենսական մասեր

հաստատելու համար: Հիմնական շեշտադրումներից մեկը ճանապարհաշինության միջոցով շարժունակության բարելավումն է՝ նախկինում մեկուսացված կամ թերզարգացած տարածքները մոտեցնելով Ադրբեջանի խոշոր քաղաքներին: Օրինակ՝ Ահմեդբեյլի-Ֆիզուլի-Շուշի ավտոմայրուղու կառուցումն արտացոլում է Ադրբեջանի մտադրությունը՝ ավելի խորը ինտեգրելու այդ շրջաններն իր տնտեսությանն ու ենթակառուցվածքներին:

Ադրբեջանը նաև օգտագործում է առաջադեմ տեխնոլոգիաներ ու էներգաարդյունավետ լուծումներ, ինչպիսիք են վերականգնվող էներգիան, որոնք նա ներկայացնում է որպես «կանաչ էներգիայի» գոտու ռազմավարության մաս:

Ադրբեջանի կառավարությունը ժողովրդագրական մեծ ջանքեր է ձեռնարկում, որի նպատակն է այդ շրջանները բնակեցնել Ադրբեջանի քաղաքացիներով, այդ թվում՝ 1990-ական թթ. փախստականներով: Քարվաճառում ու Շուշիում բնակելի համալիրների ստեղծումը վերաբնակեցման այս քաղաքականության հիմնաքարն է: Ադրբեջանը նաև կառուցում է լիովին նոր գյուղեր, ինչպիսիք են Մաշանլը, Քարխուլու, Սարըջալը գյուղերը, որտեղ նախատեսվում է մինչև 2040 թվականը բնակեցնել հազարավոր բնակիչների: Այս վերաբնակեցման քաղաքականությունը, ըստ երևույթին, երկակի նպատակ ունի: Այն նպատակ ունի և՛ անդրադառնալու հակամարտությունից հետո հայ բնակչության զանգվածային բռնագաղթի հետևանքով առաջացած ժողովրդագրական վակուումին, և՛ հօգուտ Ադրբեջանի փոխելու տարածաշրջանի ժողովրդագրական կազմը՝ դրանով իսկ ամրապնդելով վերահսկողությունը տարածքի վրա: Արցախի օկուպացված տարածքներում մզկիթների վերակառուցման ու մշակութային տեսարժան վայրերի պահպանման միջոցով Ադրբեջանը փորձում է վերահաստատել իր «պատմական ու կրոնական» կապերը այս տարածքների հետ, օրինակ՝ Շուշիում մզկիթների կառուցման ու վերանորոգման մեկնարկն ի ցույց է դնում տարածաշրջանի մշակութային ինքնության վերափոխման ու ադրբեջանական իսլամը վերարժևորելու կարևորությունը: Քաղաքաշինության ծրագրերը կենտրոնացած են գյուղատնտեսության, արդյունաբերության ու զբոսաշրջության խթանման վրա, որոնք բոլորն էլ նպատակ ունեն ստեղծելու աշխատատեղեր ու բարելավելու կենսամակարդակը:

Հիմնական ենթակառուցվածքների կառուցումը, ինչպիսիք են օդանավակայաններն ու մայրուղիները, ունեն ռազմավարական նշանակություն: Այս նախագծերը ապահովում են ռազմական նյութատեխնիկական արդյունավետ ապահովում և թույլ են տալիս արագ տեղակայել զորքերն ու մատակարարումները: Օրինակ՝ Լաչինի նոր միջազգային օդանավակայանը ուժեղացնում է Ադրբեջանի ռազմավարական շարժունակությունը և ավելի ամրապնդում նրա վերահսկողությունը տարածաշրջանի վրա: Բացի դրանից՝ բարելավված ճանապարհներն ու ենթակառուցվածքները նախագծված են տարածաշրջանն ավելի ամուր ինտեգրելու Ադրբեջանի ռազմական շրջանակին:

Այս տարածքները վերականգնելու Ադրբեջանի ջանքերը նպատակ ունեն նաև բարելավելու իր միջազգային հեղինակությունը: Կյանքի կոչելով վերակառուցման ակտիվ ծրագրերը՝ Ադրբեջանը հույս ունի ձեռք բերելու այս տարածքների նկատմամբ իր ինքնիշխանության

միջազգային ճանաչում: Քաղաքաշինության զարգացման ծավալները՝ սկսած ճանապարհաշինությունից մինչև մշակութային վայրերի վերականգնում, ցույց են տալիս երկարաժամկետ հանձնառությունը՝ վերափոխելու այդ տարածքները Ադրբեջանի տնտեսապես կենսունակ ու ռազմավարական կարևոր շրջանների:

References

1. V Azerbaydzhane nachato stroitel'stvo avtomobil'noy dorogi v Askeran, https://ru.apa.az/infrastruktura/v-azerbaidzane-nacato-stroitelstvo-avtomobilnoi-dorogi-v-askeran-foto-video-567547.
2. Nachinayetsya zaseleniye goroda Shusha, https://haqqin.az/news/314296.
3. Prezident Azerbaydzhana: Masshtaby rabot, kotoryye my vypolnyayem v Karabakhe i Zangezure, ne imeyut analoga v mire, https://ru.apa.az/oficialniye-novosti/prezident-azerbaidzana-masstaby-rabot-kotorye-my-vypolnyaem-v-karabaxe-i-zangezure-ne-imeyut-analoga-v-mire-567428.
4. Ağdam Cümə məscidinin bərpadan sonra açılışı olub, https://oxu.az/siyaset/agdam-cume-mescidinin-berpadan-sonra-acilisi-olub-yenilenib-foto.
5. Ağdamda əmək yarmarkası olacaq, https://apa.az/sosial/agdamda-emek-yarmarkasi-olacaq-837516.
6. Ağdam sakinlərinə ŞAD XƏBƏR - Üç kəndə köç olacaq, https://oxu.az/cemiyyet/agdam-sakinlerine-sad-xeber-uc-kende-koc-olacaq.
7. Azərbaycan Prezidenti: Qarabağ Universitetinin yaradılması tarixi hadisədir, https://apa.az/resmi-xeber/azerbaycan-prezidenti-qarabag-universitetinin-yaradilmasi-tarixi-hadisedir-867298.
8. Azərbaycan Prezidenti: "Müharibənin Şuşasız uğurla başa çatması mümkün deyildi", https://oxu.az/siyaset/azerbaycan-prezidenti-muharibenin-susasiz-ugurla-basa-catmasi-mumkun-deyildi-video.
9. Cəbrayılın Karxulu kəndinin təməli qoyulub, https://apa.az/resmi-xeber/cebrayilin-karxulu-kendinin-temeli-qoyulub-843104.
10. Əhmədbəyli-Füzuli-Şuşa yolunun son görüntüləri, https://oxu.az/cemiyyet/ehmedbeyli-fuzuli-susa-yolunun-son-goruntuleri-fotovideo.
11. Füzulidə daha 39 ailəyə mənzillərinin açarları təqdim olunub, https://oxu.az/siyaset/fuzulide-daha-39-aileye-menzillerinin-acarlari-teqdim-olunub-yenilenib-fotovideo.
12. Xüsusi nümayəndə: 2026-cı ilədək Cəbrayıl, Qubadlı, Zəngilana 40 min nəfər köçürüləcək, https://azertag.az/xeber/xususi_numayende_2026_ci_iledek_cebrayil_qubadli_zengilana_40_min_nefer_kochurulecek_video-2975762.
13. İlham Əliyev: "Bu gün Şuşanın yeni tarixi başlayır", https://oxu.az/siyaset/ilham-eliyev-bu-gun-susanin-yeni-tarixi-baslayir-video.
14. İlham Əliyev Zəngilan şəhərinin daxili yol-kommunikasiya şəbəkəsinin təməlini qoyub, https://oxu.az/siyaset/ilham-eliyev-zengilan-seherinin-daxili-yol-kommunikasiya-sebekesinin-temelini-qoyub.
15. İlham Əliyev "Zəngilan" və "Şayıflı" Su Elektrik stansiyalarının açılışlarını edib, https://oxu.az/siyaset/ilham-eliyev-zengilan-ve-sayifli-su-elektrik-stansiyalarinin-acilislarini-edib.

16. İlham Əliyev Cəbrayıl rayonunun Maşanlı kəndinin təməlini qoyub, https://oxu.az/siyaset/ilham-eliyev-cebrayil-rayonunun-masanli-kendinin-temelini-qoyub.
17. İlham Əliyev və Mehriban Əliyeva Şuşada üçüncü yaşayış kompleksinin təməlqoyma mərasimində https://oxu.az/siyaset/ilham-eliyev-ve-mehriban-eliyeva-susada-ucuncu-yasayis-kompleksinin-temelqoyma-merasiminde-yenilenib-foto.
18. Kəlbəcər şəhərinin 2040-cı ilədək inkişafına dair Baş planı təsdiqlənib, https://apa.az/infrastruktur/kelbecer-seherinin-2040-ci-iledek-inkisafina-dair-bas-plani-tesdiqlenib-839453.
19. Kəlbəcərdə velosiped yolları salınacaq, https://apa.az/infrastruktur/kelbecerde-velosiped-yollari-salinacaq-839748.
20. Kəlbəcər şəhərinin Baş Planının detalları açıqlanıb, https://apa.az/infrastruktur/kelbecer-seherinin-bas-planinin-detallari-aciqlanib-839741.
21. Keçmiş məcburi köçkün: "Şuşaya köç etmək tarixi hadisədir", https://oxu.az/cemiyyet/kecmis-mecburi-kockun-susaya-koc-etmek-tarixi-hadisedir.
22. Laçına köçürülən 950-dən çox şəxsin məşğulluğu təmin olunub, https://apa.az/sosial/lacina-kocurulen-950-den-cox-sexsin-mesgullugu-temin-olunub-862299.
23. Prezident: "Qarabağ və Şərqi Zəngəzur bölgələri dünyanın ən gözəl yerlərindən biri olacaq", https://oxu.az/siyaset/prezident-qarabag-ve-serqi-zengezur-bolgeleri-dunyanin-en-gozel-yerlerinden-biri-olacaq-video.
24. Prezident İlham Əliyev Cəbrayıl rayonunun Sarıcallı kəndinin təməlini qoyub, https://apa.az/resmi-xeber/prezident-ilham-eliyev-cebrayil-rayonunun-saricalli-kendinin-temelini-qoyub-843105.
25. Prezident İlham Əliyev Şuşa sutəmizləyici qurğular kompleksinin açılışında iştirak edib, https://azertag.az/xeber/prezident_ilham_eliyev_susa_sutemizleyici_qurgular_kompleksinin_achilisinda_istirak_edib__yenilenib__video-3082982.
26. Prezident: Laçın Beynəlxalq Hava Limanı gələn il istifadəyə veriləcək, https://apa.az/resmi xeber/prezident-lacin-beynelxalq-hava-limani-gelen-il-istifadeye-verilecek-853409.
27. Prezident və xanımı Şuşada Mamayı məscidinin açılışında iştirak ediblər, https://oxu.az/siyaset/prezident-ve-xanimi-susada-mamayi-mescidinin-acilisinda-istirak-edibler-yenilenib-foto.
28. Prezident İlham Əliyev Xankəndidə Qarabağ Universitetində görülən işlərlə tanış olub, https://azertag.az/xeber/prezident_ilham_eliyev_xankendide_qarabag_universitetinde_gorulen_islerle_tanis_olub__yenilenib_video-3082730.
29. Şuşada Aşağı Gövhər Ağa məscidinin bərpadan sonra açılışı olub, https://azertag.az/xeber/susada_asagi_govher_aga_mescidinin_berpadan_sonra_achilisi_olub__yenilenib__video-3083022.

30. Şuşa şəhərində daha 38 ailəyə mənzillərinin açarları təqdim olunub, https://azertag.az/xeber/susa_seherinde_daha_38_aileye_menzillerinin_acharlari_teqdim_olunub-3001338.
31. Şuşada "Xarıbülbül" Festivalı və "Şuşa - İslam dünyasının mədəniyyət paytaxtı 2024" ilinin açılışı olub, Prezident İlham Əliyev və Mehriban Əliyeva tədbirdə iştirak ediblər, https://apa.az/resmi-xeber/susada-xaribulbul-festivali-ve-susa-islam-dunyasinin-medeniyyet-paytaxti-2024-ilinin-acilisi-olub-prezident-ilham-eliyev-ve-mehriban-eliyeva-tedbirde-istirak-edibler-yenilenib-3-841505.
32. Şuşa şəhərində daha 38 ailəyə mənzillərinin açarları təqdim olunub, https://azertag.az/xeber/susa_seherinde_daha_38_aileye_menzillerinin_acharlari_teqdim_olunub-3001338.
33. Zəngilan şəhərində ilin sonuna qədər 104 ailənin məskunlaşması ücün mənzillərin hazır olması nəzərdə tutulur, https://apa.az/sosial/zengilan-seherinde-ilin-sonuna-qeder-104-ailenin-meskunlasmasi-ucun-menzillerin-hazir-olmasi-nezerde-tutulur-855773.
34. Zəngilan məscidinin əsaslı təmirdən sonrakı görüntüləri, https://oxu.az/siyaset/zengilan-mescidinin-esasli-temirden-sonraki-goruntuleri.
35. Zəngilanda QHT-lərin Əməkdaşlıq Forumu keçirilir, https://apa.az/sosial/zengilanda-qht-lerin-emekdasliq-forumu-kecirilir-foto-yenilenib-850959.